## 1910-ական թվականներ

### ՀՆԴԿԱԿԱՆ ՎԵԴԱՆԵՐԻՑ

Գոյությունն ու անգոյությունն էն ժամանակ չըկային,
Ու չըկային էն ժամանակ ոչ երկինքը և ոչ օդ։
Ինչ էր շրջում, ո՞ւր էր շրջում, և կամ ընչի՞ հովանու տակ,
Կամ կա՞ր արդյոք էս ջըրերի սև անդունդքը անհատակ։
Անմահություն չըկար այնժամ և ոչ մահ,
Եվ ոչ խտիր օրի մեջ ու գիշերվա.
Ինքը միայն էն էր շընչում առանց հողմ,
Եվ ուրիշ կյանք էն ժամանակ էլ չըկար։

Ի սկզբանե մութը ծածկված էր մութով,
Եվ աշխարհքը ողջ մի վիհ էր խավարչտին
Բայց, начало, որ ծածկված էր մութի տակ,
Ջերմի ուժից ծնունդ առավ նախ մենակ։

Ի սկզբանե սկիզբըն էր նա սիրու,
Ի սկզբանե սերմըն էր նա հոգու,
Ու փնտրելով բանականությունը, պոետները
Գոյության ու անգոյության կապը գտան սրտի մեջ։

Ու ամեն կողմ տարածվում է շողը նրանց մտքի.
Ու փայլում է վերև ներքև ճառագայթը բանական...

Նրանք եղան և ստեղծող, և մեծ եղան և հարուստ,
20 Նրանց կամքը երկրի վրա, նրանց ուժը ի վերուստ։
Ո՞վ գիտի էդ կամ ո՞վ կասի մեզ հիմի,
Թե որտեղից ելավ կազմը աշխարհքի
Ու որտեղից հայտնվեցին աստվածները իրեն հետ։
Բայց ո՞վ կասի, էս աշխարհքում, թե ինչպես է
ծագել էդ։

25 Ո՞րտեղից է ծագել արդյոք կազմը էս երկրի,
Ստեղծա՞ծ է բնությունը թե չէ.
Իր պահապանը գիտի միայն երկնքում,
Կամ, թերևս, նա ինքն անգամ չը գիտի։